



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՄՆԵՐՈՐԻ ԶՈՐՐՈՐԻ ՏԱՐԻ

ԶՄԻՌՆԻԱ ԵԱԲԱԹ. 6 ՀՈԿՏԵՄԲԵՐ

1873

ԹԻԻ 972

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գաղղիոյ մէջ օրուան լնդիւրը թագաւորական կուսակցութեան պատրաստեալ յայտարարութիւնն է, որ ի մօտ առուրս պիտի հրատարակուի: Այսինքն կառավարութեան համաժողովը և կուսակցի երեսփոխաններէն յանձնաժողով մի կազմեցաւ յիշեալ յայտարարութիւնը պատրաստելու համար: Որով պիտի առաջարկուի, կրնան, Գաղղիոյ համար միապետութիւն հանդերձ խորհրդարանական կառավարութեամբ երեքուսեան ազգային դրօշը հաստատուն պիտի մնայ յաւելցնելով անոր վերայ զին խորհրդաւոր նշանակները, ընտրողական օրէնքը պիտի վերաքննուին, և անմիջապէս թագաւորութեան ընդհանուր տեղակալ մի պիտի կարգուի:

Եթէ այս յայտարարութիւնն ընդունուի, և տարակոյս չկայ որ պիտի ընդունուի՝ ըստորոմ երեսփոխանական ժողովոյն խիստ մեծազոյն մասէն առաջարկուած ու պաշտպանուած է, եթէ կըսեմք այս յայտարարութիւնն ընդունուի ազգային ընդհանուր ժողովէն, միապետական կառավարութիւնն շատ չանցած պիտի հաստատուի Գաղղիոյ մէջ: Ուր Եանպօրի կոմսը որ օրինաւոր ժառանգն է թագաւորական գահին, պիտի չուշանայ փառաւոր հանդիսի մոտերու:

Ստոյգ է թէ հասարակապետական կուսակցութիւնքն ևս ամեն ճիշդ կը թափեն դէմ դնելու միապետական կառավարութեան վերահաստատութեանը: Սակայն նոյն սակաւթիւ են, երկրորդ՝ այժմեան հասարակապետական կառավարութիւնը՝ հանդերձ իւր նախագահովը, կարելի եղածին չափ կարգիլէ միշտ անոնց չանց գործադրութիւնը:

Չմոռնալ յաւելցնելու թէ Գաղղիոյ եկեղեցականք: որք զօրաւոր են և մեծ ազդեցութիւն ունին ժողովրդեան վերայ, վերջին ճղամբք կախատին և գործակից կը լինին թագաւորական գահին առաջարկեալ վերանորոգութեանն, յուսալով թէ այս միջոցաւ պապական աշխարհական իշխանութիւնը կրնայ վերահաստատուիլ: Այս յոյսը թէպէտ անհիմն, բայց այժմեան հասարակապետական կառավարութիւնն կեր-

պիւ իւր կը գործէ զայն մինչև որ միապետութիւնը հաստատուի Գաղղիոյ մէջ:

Պրիւքսէլի Բարլըման կոչուած օրագիրը կը հաստէ թէ միապետական կառավարութեան հրատարակութիւնը չուտով տեղի պիտի ունենայ ի Գաղղիա, վասնզի, կըսէ, ազգային ժողովոյն մէջ թագաւորական կուսակցութիւնը արդէն 110 քուէից մեծամասնութիւն մի ունի: Մօնսիւ Բօլ տը Գասանեաք ևս այս ծանր խնդրոյն վրայօք հետեւեալ կերպիւ կը գրէ Բէյօրագրոյն մէջ:

«Եթէ Եանպօրի կոմսը զիջողութիւն մի ընէ Սահմանադրութեան և դրօշակին վերայ, շատ կարելի է որ երեք ամիսէն յառաջ զՀանրի Հինգերորդ թագաւոր ունենամք ի Գաղղիա»:

Ինչպէս ուրիշ անգամ ևս գրուցած եմք, հաստատուն կերեւի թէ Գերմանիոյ և Իտալիոյ տէրութեանց մէջ պաշտպանողական դաշմնի դաշնակցութիւն մի եղած է: Պէշլինէն հասած վերջին լուրերը կը ցանցան թէ, Վիքթոր-Էմանուէլ թագաւորը յիշեալ մայրաքաղաքէն մեկնելու ժամանակը՝ խորհրդակցութիւն մի տեղի ունեցեր է ի մէջ Իտալիոյ թագաւորին, Գերմանիոյ կայսեր, Պիսմարք իլխանին և Իտալիոյ արտաքին գործոց պաշտօնէին: Երկար վիճաբանութենէ ետեւ, համաձայնեալ են և դաշնագրութիւն մի ստորագրուել է, որ հետեւեալ երկու դաշինքը կը պարունակէ.

Թօրո՞ւմ 1. Դաշնագիր երկու բարձր կողմերը կը յայտեն թէ ի դիպուածի եւրոպական խռովայոյղ դէպքերու, երկուքն ալ մի և նոյն ընթացքը պիտի բռնեն:

Թօր. 2. Դաշնագիր երկու կողմերը թէ և կաթոլիկութեան վերաբերեալ խնդրոց մէջ տարբեր կարծիք ունին, բայց և այնպէս կը յայտեն թէ ի դիպուածի մահուան Ս. Պապին, դիմադրութիւն պիտի չընեն կարդինալաց ընտրողական ժողովոյն օրինաւոր որոշմանը, բայց միայն եթէ Պիոս Իններորդին յաջորդն ընտրուի ի դաղղիացի անդրաբնական կարդինալաց: Այս դաշնագրութիւնն թէպէտ և պաշտօնապէս ծանուցեալ չէ, բայց անոր ստուգութեւ վերայ տարակոյս չընար լինել, որովհետեւ յիշ-

եալ տէրութեանց փոխադարձ գլխաւոր օգտիցը վերայ հիմնեալ է:

Գերմանիոյ մէջ մէկ կողմէն հին կաթոլիկներն՝ այսինքն Պապին անսխալութեան նոր վարդապետութիւնը չընդունանքը կը զօրանան կը յառաջադիմեն: միւս կողմէն կրօնամոլ կղերք՝ այսինքն Պապին անձնական անսխալութիւնն ընդունող եպիսկոպոսունք փորձ կը փորձեն դէմ դնել երկրին օրինացը և ըմբոստութիւն կընեն կառավարութեան դէմ: հետեւեալք ըստ տրամադրութեանց հաստատեալ օրինաց կը պատժուին տուգանք և բանտարկութեամբ: Այս կերպիւ, Լոտոքովսքի արքեպիսկոպոսը կրկին դատապարտեցաւ 600 թալէր տուգանաց:

Գերմանիոյ Բէյնքէն գիտնական եկեղեցականն, որ ժողովրդեան և կղերին միաբան ընտրութեամբն՝ հին կաթոլիկաց եպիսկոպոս կարգուած է, ըստ օրինաց երգում ըրաւ կրօնից պաշտօնէին առջև: Ինչպէս կը տեսնուի, Գերմանիոյ մէջ հին կաթոլիկ անուամբ ժողովուրդը մեծապէս յառաջադիմելու վերայ է: որովք թէպէտ և զպապը կը ճանաչեն իբրեւ զլուսն հռոմէական եկեղեցւոյն, բայց կը մերժեն անոր հաստատած նոր վարդապետութիւնը, այսինքն պապերուն անձնական անսխալութիւնն, ինչպէս նաեւ եկեղեցական կալուածոց վերայ անոր պահանջած իշխանութիւնը:

Սպանիոյ մէջ համազգային պատերազմը կը շարունակուի: Հոլանտիոյ տէրութեան ծանր ուշադրութիւնը՝ Աթինի դէմ եղած արշաւանաց վերայ կեդրոնացեալ է: Վոլոնթիէ զօրապետը՝ թագաւորական հրովարտակաւ, պատերազմի պաշտօնեայ անսանցեալ: Պատի մեծ դուքան և մեծ դքսուհին՝ ընկերութեամբ Գերմանիոյ կայսեր, արդէն հասած պիտի լինին ի վէշնաւ: ուր կը սպասուէին:

Անգղիոյ բարլամէնթը Դեկտեմբերի 4-16ին պիտի բացուի: ուր անտարակոյս ծանր վիճաբանութիւններ պիտի լինին: վասնզի ազատասիրական և պահպանողական (թօրի) կուսակցութիւնքն իրարու դէմ մաքառելու վերայ են: և ըստ ամենայն երեւմանց կը տարբերին նախա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

Գաղիկ վերջին արքայ Բագրատունեանց,

ի բարձրագոյն ատենի կայսեր Յունաց ի Բիւզանդիոն:

Ո՞ւրիշ առիթ կորովասիրտ կայսերական յատենին

Առեալ բազմոց գոռայ գոռէ գիւտս հզօր ի ձեռնին:

Գաղիկն է նա շտաբաստիկ պերճ թագաւորն Հայկազանց,

Բագրատունեան նոր շառաւիղ, յաղթողն ազգաց և ազանց:

Վա՛հ, մինչ երբեմն սիգայր, ձեմէր, մանչիւն հանէր ահաղին,

Լերկէք բարձունք, ձորք և անտառք ձայնիւ նորին հնչէին,

Ի գառապիղ արդ ըմբռնեալ դառով իւրոց համազգեաց,

Չայս տրիտուր Տունն Հայկական չափէ իւրոց դիւցազանց:

Սա գուն գործէ ըզրազմամարդ մայրաքաղաքն զիւր Անի,

Այն նենգածէտ աղղին Յունաց չ՛յանձնել զգանձն հայրենի:

Այլ զի՛նչ ետես յետ սակաւուց, ըզրանալիս քաղաքին,

Բառմեցան հերք եղկելոյն, սարսէր անպէն պատանին:

Յապուէ Հարեալ արձանանայր, անգամք նորին զողջօջ:

Յակնողեացն արեւաբուր յորդ արտառուս նա հոսէր:

Այս տեսարան աղիողորմ երազ թուէր արքային,

Լեզու նորին ի քին կցէր և երակունք պաղէին:

Շրթունք ապա պարզին ի խօսս, ասէ ո՛վ արք բազմականք,

Զի՛նչ այս տեսիլ, ցնորք իցեն, կամ թէ անուրջ խօշականք:

Ո՞չ ապաքէն իմ նախարար զերգումն անուտ կերեցին,

Խոստանալով ինձ՝ պինտ ունել ըզրանալիս քաղաքին:

Դաւաճանաց չմտնել ի ձեռս ըզրանկալին իմ Անին,

Չ'լինել առիթ չարեաց աղղին, անձանց իւրեանց գլխովին:

Այլ արդ աւա՛ղ, ժխտեալ զերգմամբ զայս անցս ընդ իս անյուշին,

Որում անշուշտ վրէժխնդիր լիցի Արքայն երկնային:

Աւա՛ղ աղիւղ Ասքանաղեան, վա՛յ անձամատն եղկելաց,

Ազգ հիւսցեալ, ազգ ոխերիմ բարերարաց քոց կենաց:

Մինչ ցե՛րք ի ձեզ անմտութիւն, ցե՛րք և ոգի դաւաճան,

Որով անկաւ, կործանեցաւ ողորմելին Հայաստան:

Մնայ Գաղիկ աստ տարագիր, զրկի յիւրոց հայրենեաց,

Այլ ո՛չ և դուք զերծանիցիք ի թշնամոյն ի ժանեաց:

Յուէ ձեզ վախճան Մեհրուժանայ և ազգաբան Վասակայ,

Յորոց վերայ լացին գրիչք Խորենացւոյն Եղիշեայ:

Սիրեմ ըզբեզ, ոգբամ ըզբեզ, իմ անձկալի Հայաստան,

Մեկնիմ ի քէն, ոչ ևս տեսցես ըզբոյգ Գաղիկ յաւիտեան:

Անկցի Անին, կործանեցի ոստան չքնաղ հրաշալի,

Բուրց անդէն և գազանաց ձայն և վայելն հնչեացի:

Թագն արքունի, գահն արքունի ի քէն աւա՛ղ կապտեցին,

Մինչև որդիք քո երկպառակէ սիրոյ զօղիւ կապեցին,

Ի Շուշի, 11 Օգոստոսի 1873:

Սեդրակ Աստուածատրեան Նազարեանց:

Գահութեանը եղած այժմեան ազատաիրական
Գահութեանը պիտի լուծուի : Միայն Տիրապետը որ
պահպանողական կուսակցութեան գլուխն է ,
յապիշտակողն անյալող կանուանէ զխորհուրդն
այժմեան պաշտօնէից :

ԱԶԳԱՅԻՆ

Անցեալ շաբթու Շուշիէն ընկալաք զհետեւեալ
նամակն և նորա մէջ յիշուած չափածոյ
գրութեանն , որք Ղարաբաղու ազգային հոգեւոր
գաղութին յառաջագոյն աշակերտաց գովելի
աշխատանքութիւնն են :

Ներկայ թերթին մէջ այսօր հրատարակելով
զնամակն , և չափածոյ Ձ գրութեանը կրկնապատկար
նամք հետզհետէ 'ի լոյս ընծայել նաեւ զմնացեալսն
'ի բարենախանձ քաջաբերութիւն աշակերտաց
բոլոր ազգային գաղութաց առհասարակ :

Ուրախ եմք տեսնելով թէ Ղարաբաղու ազգային
գաղութին օրըստօրէ յառաջագոյն կը զարգանայ
և նորա մէջ ուսանող աշակերտք լինեն
բարեպաշտ և հայրենասէր զգացմամբ . որոց
ապացոյց կը համարուին իրենց ոտանուոր պատուական
գրութեանն , զորս ընթերցողք Արշալոյս
մէջ հետզհետէ տեսնելով , պիտի հասկանան
թէ որչափ մեծ արժեք ունի բանիբուն և
ազգասէր Առաջնորդի մի անխնայ ջանքը :

Շուշի , 12 Սեպտեմբեր 1873

Յարգելի խառնաճիւղ Արշալոյս ,

Յարգելի Յունիս ամսոյ 11էն սկսաւ Ղարաբաղու ազգային
հոգեւոր գաղութի հարցաքննութիւնն 'ի ներկայութեան
խումբ հանդիսականաց , և ստատեցաւ նոյն ամսոյ
վերջին : Աշակերտները առհասարակ ուսման ամենայն
անհրաժեշտ մէջ յառաջագոյն հանդիսական , իսկ
հայկաբանութեան մէջ արդարեւ քանակի :

Նախքան Յունիսի ծին կատարուեցաւ պարգևատրութիւն
գաղութինն : Գաղութի ընդարձակ դահլիճի մէջ : Չնայ
յիշող օրի խառնակութեան , այս ականատար հանդիսին
ներկայ էին 300ի չափ մարդիկ , որոնցից մեծ մասն բանիբուն
և ուսումնական անձինք էին :

Նոյն օրը դարձեալ մի ընդհանուր հարցաքննութիւն
էր , և ոչ չափ կամ շոշոյուն հանդէս , որ մեր ազգի
մէջ 'ի տեղիս տեղիս կը կատարուի արտաքին կերպով
ժողովրդոց աշխարհ զօրութեամբ 'ի միաս քան թէ յօգուտ :

Նախ երրորդ և չորրորդ դասարանի աշակերտները
կարգացին իրենց հայրենասիրական , բանաստեղծական
և բարոյական նիւթոյ վրայ բազմաթիւ ճառեր և ոտանային
նախերեր . յետոյ սկսաւ հարցաքննութիւնն : Չնայ
զան հայերէն մատենագրութիւններէից բանալով աշակերտաց
թարգմանիչ և նոյա մտքերը բացատրել տըրուեցաւ :
Հարցմունքներ առաջարկուեցան ազգային պատմութեանն ,
աշխարհագրութեանն և ճարտասանութեանն : Անձ
գոհութեամբ պատասխան ընդունուեցաւ :
Զարմանալի էր աշակերտաց գրած անպատրաստ
վսեմ շարադրութիւնները , որոց նիւթը նոյն իսկ հան-

դիսականներէն առաջարկուեցաւ : Խառնաճիւղից գեղարմեծար
Պ. Թէսդորոսը առաջարկեց երկու աշակերտի
զրեւ մարդկային պարտուց վրայ , որոնցից մէկը
զրեւ պարբերաբար մարդոց առ Աստուած ունեցած պարտուց
վրայ . իսկ երկրորդը՝ աշխարհաբան երեք պարտուց
վրայ միանգամայն , այն է Աստուածային , անձնական
և ընկերական : Արտաքինական մեծա . Օղջան
բէկն առաջարկեց հետզհետէ ուրիշ երեք աշակերտաց
զրեւ գրոց բարբառով՝ ճամբորդութեան , ապերախտութեան
և ծուլութեան վրայ : Յարգելի Ղանիէլ բէկն տէր
Ղուկասեանց առաջարկեց նախ՝ ուրիշ մէկ աշակերտի
Ռուսոյ Հայոց այժմեան վիճակի վրայ , և ապա Կ—Տ
աշակերտաց զրեւ նախնի վարերու և այժմեան հոգեւորականաց
վրայ : Նորին սրբազնութիւնն Սարգիս արքեպիսկոպոսը
առաջարկեց մի աշակերտի զրեւ հայրական պարտուց
վրայ , և թէ որչափ ինչ դիտուածոյ մէջ պարտական
չէ հօրն հնազանդել : Այս ամեն նիւթոյ վրայ
սրտառու ռճով , ընտիր հայկաբանական լեզուով և գեղեցիկ
խմբակներով շարադրեցին յանկարծ 'ի ներկայութեան
նոյն իսկ հանդիսականաց :

Բոլոր բազմութիւնը այս սիրալի յառաջադիմութիւնը
տեսնելով , զարմացան և ուրախացան , որովհետեւ պարզ
և ակներեւ տեսին թէ՛ աշակերտները ուսման մէջ ուր
չափ յառաջացած են , և իրենց միտքը ուր աստիճան
զարգացած է , և թէ հայկաբանութեան մէջ ո՞րքան կատարելապէս
զարգացած են և ո՞րչափ ազգային զգացմամբ լցուած :

Յիշատակութեանց և գովեստից արժանի են նաեւ այն
սրտառու և առնչախոսութիւնները , զոր արին չորրորդ
դասարանի աշակերտները հետեւեալ նիւթոյ վրայ , այն է՝
մեր ազգի յառաջադիմութեան միջոցներու , ծայրահեղ
օտարասիրութեան շարաշար հետեւանաց , զեղխութեան ,
և հանճարոյ քաջաբերութեան և խրատականաց և միաբանութեան
վրայ . որոնք մեծ ապագորութիւն արին հանդիսականաց
սրտին՝ և նոյա աշխարհից քաղցր արտաստուց կաթիլներ
բոլորեցին : Մէկ խօսքով այս հանդիսին մէջ ազգ , հայրենիք
կրօն , լեզուն , ազգային զգացմունք հաւասարապէս
կը փայլէին :

Ի վերջոյ՝ դասարանէ 'ի դասարան փոխադրելի աշակերտաց
ցուցակը կարգացուեցաւ , և ապա յառաջագոյն աշակերտները
մատնաներով և գովեստական թղթերով վարձատրուեցան
և իսկ չորրորդ դասարանի աշակերտները թուով տասն
իրենց ուսումնական սահմանեալ ընթացքը աւարտած
լինելով , ուսման վկայական ստացան , և հանդիսականք
ուրախալից զգացմամբ մեկնեցան , օրհնելով մեծախառնակ
Սարգիս Սրբազանի կեանքը : Բոլոր քաղաքը թնդաց
աշակերտաց իրաւայի գովեստական ձայներով :

Յարգելի տէր , աշակերտաց չափածոյ գրութեանն
մէկ քանիսը ստանալով , արժան համարեցայ ընդ այսմ
ուղարկել առ ձեզ , խնդրելով գրութեանս հետ հրատարակել
յուրաքանչյուր Հայ հասարակութեան , ձեր պատուական
լրագրոյն մէջ , որոյ ընթերցումն յաճախած է քաղաքիս
մէջ՝ իւր ողջամիտ և ազգասիրական խմբագրութեան
համար , ինչպէս նաեւ իւր խաղաղասիրական և իմաստալից
խօսքերուն համար :

Իսկ վերջիշեալ տեսնախօսութիւնները՝ գրաւոր լուստանալն
յետոյ , զանոնք ևս պատշաճ կը համարիմ ուղարկել
ձեզ 'ի հրատարակութիւն :

Արշակ Յարութիւնեան Եարամիլեանց :

Անցեալ շաբթու Մանիսայի Ուսումնական Ընկերութեան
կողմանէ երկար նամակ մի ընկալաք , որ նոյն քաղաքին
ազգային գաղութին հարցաքննութիւնը և բարեկարգ
խութեան հանդէսը մանրամասնաբար կը նկարագրէ :
Այս հանդէսը սուրբ եկեղեցւոյն մէջ փառաւորապէս
կատարուեց է 'ի ներկայութեան բազմաթիւ ժողովրդեան ,
և յառաջագոյն աշակերտք պատուական ճառեր
կարդացեր , Մեծին Ներսէսի ողբերգութեան երրորդ
արարուածը յաջորդութեան ներկայացուցեր և հանդիսականաց
գոհունակութիւնը լիովին ստացեր են : Մանիսայի
ազգային գաղութին այս օրինակ բարեկարգութիւնը
և յառաջադիմութիւնը նոյն քաղաքին Ուսումնասէր
Ընկերութեան անխնայ և ազգասիրական ջանից
արդիւնքն են : զորս գովութեան , շնորհակալութեան
և քաջալերութեան արժանի կը համարիմք :

Մանիսայի Հայոց Ուսումնական Ընկերութիւնն
բազմապէս է 'ի վեց ուսումնասէր բարեխան անդամոց .
որոց անուանքը կը հրատարակեմք այս բարեպատեհ
առթիւ , որպէսզի ընդհանուր ազգը ճանաչելով իւր
համարուածին պատուէ և քաջալերէ զնոսա : Ահաւասիկ
անուանք նոցա :

Յարգելի տեառք Յակոբ Դարբինեան , Յակոբ տէր
Արիստակէսեան , Սիմէոն Յակոբեան , Արաշամ
Արիստակէսեան , Թադւոր Յարութիւնեան , Թորոս
Խմբագրեանց :

ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՈՎՈՒԹԻՒՆԻՔ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Յաւալիէ ապաքին տեսնել որ այս խառնութիւնքն
տակաւին վախճան մի շունեցան և յիշեալ մայրաքաղաքին
ազգային թերթերէն շատերը՝ յերկուս ընդգիւն
մարտ կուսակցութիւնն բաժանեալ , իրարու հետ անարժան
կերպիւ կը բանակուին , խառնութիւնը կը անուցանեն
և ուսման վարութիւնը կը զրգունեն ու հաստատուն
կը պահեն 'ի մեծ միաս ազգային գործոց : Յիշեալ քաղաքից
զրայ էջերն ժամանակէ մը 'ի վեր լեցուն են բանակուտ
կան երկար յօդուածներով որք անտարակոյս զրուանք
կը պատճառեն ողջամիտ և խաղաղասէր ժողովրդոց : Եւ
ինչ է զվստուր առարկայն այս բանակուութեան : Պատ
րիարքի և Քաղաքական ժողովոյ մը խնդիր . այսինքն
խորիման սրբազանին հրաժարականը , որ չընդունուեցաւ
և Քաղաքական ժողովոյն հրաժարականը՝ զոր հարկէ
ընդունել և նոր ժողով մի կազմել . որով կոխը կը զադարի
և ազգային վարչութիւնն գէշ կամ աղէկ իւր ընթացքը
կը շարունակէ : Բայց դժբաղդաբար կուսակցութիւնքն
երբէք չեն ուղեր իրարու հետ միաբանիլ : Ս . Պատրիարքին
հակառակորդներն չեն կրնար մարտել Նորին Սրբազնութեան
հրաժարականին չին :

Ի ՔԱՆԱԿՆ ԱՆԻ

Ահա՛ Անին մեծին Հայոց , ահա՛ սարմանք Հայկազանց ,
Անկաւ ահա՛ , կործանեցաւ , լեալ օթարան գաղանաց :
Չուրկ 'ի փառաց , զուրկ յաթոռոց բազմի ահա զերթ
այրի ,
Ողբայ զկորուստ իւր սիրելեաց , իւր զաւակաց
գեղանի :
Ո՞ր են արքայք , ո՞ր գիւղացուք , ո՞ր ապարանք
գեղեցիկ ,
Չէ՛ արդ Աշոտ , ոչ քաջն Աբաս և ոչ հօգորն
Գաղիկ :
Որոց թագին շքեղ ճաճանչ յեւս արեգին
փողովոյն ,
Յնձայր ողջոյն իմ Հայաստան , տոն
գեղապար կատարէր :
Պատեաց ըզսա վեհն Սրբառ հաստակաւոց
պարսպօր ,
Եւ զարդարեաց ահեղ բրգամբ և պանծալի
շինուածովք :
Ի քաղաքիս եկեղեցին հրաշակաւոց
ամբուսայր ,
Յոյր գագաթն խաչ Փրկչական 'ի
յարեւուն ցոլանայր :
Զա՛հ բիւրեղեայ 'ի տաճարին հանդոյն
արվալոյ շողջոյն ,
Զաստեղազարդ լուսապայծաւ երկնից
կամար յորինէր :
Աստուածային պաշտօնէից ձայնք
անընդհատ հնչէին ,
Որք հողւոր երգով քաղցրիկ
զերկնից արքայն օրհնէին :
Զէր համարոյ թիւ բնակչաց , ծփայր
ողջոյն այս ոստան ,
Զեկեղեցիս հաղար և մի էր տեսանել
հրաշազան :
Կրպականին բազմահարուստ , զեղուն
և տունք վաճառաց ,
Վաճառականք ծագաց յերկրէ
անդ դիմէին խուռնթիւնաց :
Աստ օրիորդք զեղազանգուրք
պննեալ ծաղկամբ խայտային ,
Երիտասարդք իշխանազունք
խրախ 'ի սիրտ հրճուէին :
Աստ զօրականք քաջակորովք
'ի գէն 'ի զարդ վառէին ,

Եւ թշնամեաց Հայաստանի տհա
սարսափ ազգէին :
Գիտն Սխուրեան հանդէպ սորին
քաղցրիկ ձայնիւ խոխոյնէր ,
Ի ձայն երգոց և ցնծութեան
կարկաշելով անցանէր :
Անդ առ եղբրք քնարն հայկական
զիւրն բաղխէր կեղեղոց ,
Ըզրօտասէր անդ պատանեաց
նուաղ հնչէր և թռչնոց :
Լսէր Երիւկ , Լսէր Անին ,
խնդայր հրճուէր 'ի հոգի ,
Լսէր Վանանդ և զրային ,
ո՛հ , տեսարան ցանկալի :
Սւա՛ղ , կորեան արդ
այստեղիկ , Անին մնայ
ամայի ,
Յաւերակաց վերայ ողբոյ
Հայաստանեայ վեհ ոգի :
Յոյն դուռնան եւստ զարեւ
իմոյն Գագկայ արքայի ,
Բագրատունեան կորեաց
զաթոռ , կորեաց ըզթազն
արբունի :
Յարձակեցաւ արքայն հօգ
գաղանամիտն Սրիտալան ,
Ի սայր իւրոյ անդուլթ
սրոյն ջնջեաց ըզտունն
հայկական :
Հրճիք արար զեկեղեցիս ,
զԱնին արեամբ ոռոգեաց ,
Սմայացոյց 'ի բնակչաց ,
սպան զորդիս Հայկազանց :
Սէ՛ , զո՞ր հարուածս
մահահրաւէր պատ ոչ
գործեաց Զարմաշան ,
Սնագորոյն այն բռնաւոր
և մարդախոնձ գոռ գազան :
Լուաց արեամբ ըզՀայաստան ,
լուաց գագաթն պանծալին ,
Հրոյ ճարակ , սրոյ ճարակ
արար զորդիս հայկազին :
Զի՛ք այլ Սրբառ աշխարհաշէն ,
չի՛ք և Գագիկ քաջարին ,
Մեռաւ խալառ , անհետացաւ
հոգեւորական իմ Անին :
Գնաց կորեաւ փառք
Հայկազանց , կորեաւ անուոն
Հայութեան ,
Նախանձ նոյնն Լատելութիւն
եկայ մնաց մի միայն :

Սեդրակ Աստուածատրեան Նազաբեանց :

դռնուկը . իսկ ֆէառաքանիսն ժողովոյն հակառակորդներն՝ որ բազմաթիւ են , կը դաժանէին որ չուտով արձակուի . վասնզի անոր դէմոյն տակէն զրգոռեցաւ և կը շարունակուի , կըսեն , ներկայ ազգային ցաւալի կացութիւնը : Բայց ընդհանուր ժողովոյն մէջ ազակոդմեան և ձախակոդմեան երեսփոխանք կան , կըսեն ազգային լրագիրք . և ինչո՞ւ չըլլան . միթէ Անգղիոյ և Պաշտօնայ բարձրակարգութիւնը օրինակ առնելու չէ՞ : Այս ազակոդմեաններն ձախակոդմեաններուն հակառակ են . առաջիններն , եթէ չենք սխալիր , դռնփակ նիստ կը պահանջեն . իսկ ձախակոդմեաններն դռնբաց : Բայց մոռացանք դրոշմելու թէ Հայ սփարեան խմբակներ ևս կան եղբ , որոցմէ Աջակոդմեան երեսփոխանք կը վարեն որ չըլլայ թէ վրանին յարձակին և դանակոծեն զնոսա եթէ նոցին զրգոռիչ կուսակցութեան կամայք հակառակ որոշում ընեն : Հետեւեալ կը ընդհանուր ժողովը ապահովութիւն կը խնդրէ . և յումմէ՞ . անշուշտ 'ի Բարձրագոյն Պրանէ խնդրելու է : Քանզի դռնփակ նիստը բաւական ապահովութիւն չկրնար մատուցանել . ըստորում Հայ սփարեան խմբակներն , որոց գոյութիւնը կը ծանուցանեն մեզ կ . Պրոյոյ ազգային լրագիրք , կրնան ընդհանուր ժողովոյն դռները կտրել և դերեսփոխաններն դանակոծել . քանզի սփարեան (գաղղիարէն սերբ) մարդասպան կը շնորհակ : իսկ կրօնական ժողովոյն և տեսուչ ժողովոյն գաղով , կըսուի թէ նորա ևս ապահովութիւն կը պահանջեն յերեսփոխանական ժողովէն , որ անշուշտ չկրնար տալ զոր ինչ ինքը չունի :

Այս ապ օրինակ է կեդրոնական վարչութեան այժմեան կայութիւնը : Այսպիսով , որ գաւառացի մէջ անդադար հրահանգներ յոգնորիցով բարեկարգութիւնը , օրինաւորութիւնը և լուսաւորութիւնը տարածելու պահանջներն աւելի և գուցէ ունի տակաւին . . . :

Այնպէս կ . Պրոյոյ ազգային գործոց մեր խելքն չտանկով , նոյն լրագրաց ոմանց քանի մը յօդուածներն յառաջ կը բերենք 'ի տեղեկութիւն մեր ընթերցողաց : Փոփոխ լրագրոյն Սեպտեմբեր 26 թուոյն մէջ հետեւեալը կը կարդաւ .

«Խնդիր մը՝ որոյ վրայ տակաւին մինչև երկէ ամենայն վերադարձ կը վերադառնաւ , և որ սկսաւ ծանծայով ընդլայնել , վերջապէս լուծուեցաւ . . . Ընդհանուր ժողովոյն դիւանը քանիցս երկար խորհրդակցելէն յետոյ , 60 երեսփոխանաց կողմանէ դռնփակի համար եղած առաջարկութեան գործադրութիւնը անհրաժեշտ համարել և գրել է Ս . Պատրիարքին : . . . Որ ընդունելով դիւանին այս վերջնական գիրն՝ որոշել է ըստ այնմ վարկէ և երկէ ու չատն առ իւրաքանչիւր երեսփոխան յատկապէս տպեալ հրաւիրագրեր սրբել սկսան , որ պէտք առաջիկայ ուրբաթ օրը՝ Սեպ . 28 Ղալաթիոյ Ս . Լուսաորիչ եկեղեցին ժողով կազմուի :

«Բարձրագոյն Պրան ծանուցանելու լուր մ'ալ ելաւ . և Ս . Պատրիարքն երկէ Ղալաթիա անցնելով՝ ընդհանուր ժողովոյն դիւանին հետ խորհրդակցեցաւ . բայց Բ . Պրան ծանուցանելն աւելորդ համարուեց է՝ : (1)

Գործեալ յիշեալ լրագիրը կրօնական ժողովոյն անդամոց վրայոք խօսելով կրէ . . . «սակայն հարկ է որ պաշտօնական ու անձնական ապահովութիւն պահանջեն . քանզի Քաղաքական ժողովոյն անդամք երբ ծեծուեցան ու սրտեցան , առանձին նիստ կազմած չէին . նոյն օրը խառն ժողով գումարեալ ըլլալով , կրօնական ժողովոյն գերաւ . անդամք ալ ներկայ էին . ուստի Քաղաքական ժողովոյն եղած անարգանքին իրենք ալ մասն և բաժին ունին : Եւստ հաւանական է որ վաղն ալ ուղղակի իրենց վրայ յարձակին քանի մը սրբիկաններ , և ծեծեն փետեն ու սրտեն : Այսպէս ապահովութիւն յաւանջելու են նաև ամեն խորհուրդ ու հոգաբարձութիւնք և այս ապահովութիւնը տրուած կըլլայ , եթէ Քաղաքական ժողովոյն վրայ յարձակող սփարեան խմբակն ինքնութեան ու պատմոյ ենթարկուի՝ :

Մարտի Սեպտեմբեր 25 թուոյն մէջ ևս հետեւեալը կը կարդաւ .

«Զօյիկանք և անոնց հաւատարմութեամբ եղող Օրապիւր ընդհանուր ժողովոյն նիստը դռնփակ ընել տալու համար՝ քանի չարախէ 'ի վեր ամեն կերպ ստուծիւն ու զրպարտութիւն նորոգեցին ժողովրդեան վրայ , և իրենց ազգադաւ նպատակին արգելք եղողներուն դէմ ալ ամեն ընտանք և հայհոյութիւնք ժայթկցին . և որ առաւել է , իրենց վատ խորհրդոց օրինաւորութեան ձեռք կը կրկնուին տալով պարզամտները խաբել ջանացին և կը ջանան :

(1) Սակայն այս կէտին աւելորդ համարուիլը՝ Սանձաղորդեան տրամադրութեանց հակառակ է :

«Սերբ կրանք թէ ժողովուրդը ճշմարիտ բանեցուցուի . մերթ կրանք թէ ամէկ քանի անձինք բռնութիւն և ծեծ չուր ըրին՝ . մերթ ալ կրանք թէ «խնդրոյն ընտրութիւնը դռնփակ կուզէ՝ :

«Եթէ իրօք ժողովուրդը ճշմարիտ և բանութիւն բանեցուց , դռնփակ նիստ ինչպէս պիտի կրնանք ընել . միթէ ժողովրդեան դէմ դռները գոցելով ժողովուրդը կը խօսուի , և միթէ զինուորապետ և բռնութեամբ զուարթեալ տալու ըլլանք , այնուհետև սահմանադրական ժողով կրնանք կոչուիլ : Երբեքս առարկուի թէ Եւրոպոյ սահմանադրական ժողովուրդները զինուորներ կը կայանեցնեն ժողովոյն գրանցքով . չատ աղէկ , բայց այն պահպան զինուորներն իրենց ազգակիցներն են , ինչպէս որ մեր սոհապան զինուորներն ալ մեր ժողովուրդներն են , և այս սկզբունքն Օրապիւր ալ ընդունած և քանի մը չարախ առաջ հրատարակած էր՝ : (2)

Օրապիւր ևս իւր 1041 թուոյն մէջ երկար յօդուած մի կը հրատարակէ կ . Պրոյոյ ազգային կուռոց վրայոք , յորմէ հետեւեալը կը քաղուի . «Ամբարշտութիւնն ու շարախօսութիւնը միշտ անարգաւորաց գործիքներուն ու արքաներաց բաժինն են . դաժ է , դաւաղութիւն մը յաջողեցնելու համար ամեն անամօթութիւն գործելու ազատ կը կարծեն զիրենք :

«Ընդհանուր ժողովոյն Օրոշոտս 24ի նիստին դաւաղութեան առաջին քայլն առնելու համար երեսփոխանաց ոմանց վրայ բանեցնելու ուղուած յայտին ճշման և բռնութեան մի քանի անխիղճ հեղինակացը դէմ ըողոքելով հանդերձ , յառաջիկայ նիստը դռնփակ ըլլալու առաջարկութեան գրոյն՝ բազմաթիւ աշխարհական և երեսփոխանաց հետ մեծ մաս մ'ալ եկեղեցական երեսփոխանք ստորագրութիւն դրեցին :

«Գոնփակ նիստ ուղեւ առաջարկութիւնը , զայդ ստորագրողներուն անձը այս աստիճան հրապարակաւ ծաղրել և կատականայ արժանի ընելու դատապարտելի իրողութիւն մ'է եղեր . և այնպիսի ատեն մը՝ երբ կրկին և կրկին կառավարութեան ապագայական տեսչութեան դիւանին կողմէն հետգհեալ ազգաբարձութիւններ տեսչալու վրային ազգային լրագրաց , եկեղեցականաց և կրօնական նշանակեցիչ դէմ չափազանց և նախատական լեզու մը գործածելէ՝ դաւաճալ պատուիրելով . այնպիսի ատեն մը կըսենք , խորհմանի կուսակցի թերթերն և գլխաւորաբար Մեղրու , դռնփակ նիստի առաջարկութեան համաձայն գտնուող եկեղեցականներն և կրօնական պաշտօնեաներն սանձարձակ ապերաստութեամբ և անամօթ լրբութեամբ մը յակնէ յանուանէ ծաղրելու նախատելու և նշանակելու կը յանդգնի , անոնց այլ և այլ ներքին դիտումներ և գաղտնի նպատակներ վերաբերեալ , որք հասարակութեան առջև զանոնք վախճանաբանելու անպատեղելի և կասկածելի երեցնելէ զատ ուրիշ նպատակ չունին՝ :

«Հնդկացի թոյլ լրագրոյն խօսքին նայելով՝ կրէ կ . Պրոյոյ Դիւան հայերէն թերթը , կէս դար յառաջ Հայ պարոն մը կալկաթայի Հայոց եկեղեցւոյն 14,000 լուս կտակալ թողեր է , և դեռ նոր գտնուել է կալկաթայի բարձրագոյն ատենին արձանագրութեանց մէջ՝ :

Երկու անգղիական լրագրոյն տուած այս տեղեկութեան մէջ , մեք կարծեմք թէ սխալ մի պիտի լինի . քանզի կարելի չէ որ հայազգի երեւելի անձն մի այսպիսի մեծ կտակ մի ըրած լինի և կալկաթայի Հայոց հասարակութիւնն տեղեկութիւն չունենայ մինչև ցայսօր : Ուստի յուսամք թէ ներկայ յօդուածը կարդալով , կալկաթայի մեր ազգասէր բարեկամք զաշխատութիւն յանձն պիտի առնուն նոյն կտակին վրայոք բացատրութիւններ տալ մեզ . զորս պիտի փութամք հաղորդել մեր ընթերցողաց :

—Կըսեմք թէ ամենայն Հայոց վեհա . կաթողիկոսն , որոյ ազգասիրական և հայրական խնամքը կը տարածուի ընդ ամենայն երկիր բնակող իւր հոգեւոր հօտին վերայ , բարեհաճեր է 800 քարպովանցի արժէթուղթ յուղարկել 'ի կ . Պրոյի Մագաւոտեան վեհմա . տեարց Սիմօն և Սեպուհ պէյերուն , խնդրելով որ անոնց տա-

(2) Մեր բնք կրնար հասկանալ քե հպատակ ազգ մի՛ իւր հոգեւոր իշխանութեան (քանզի աշխարհական իշխանութիւն չունի) եւ իւր հոգեւոր ժողովոյն պահպանութեան համար ինքզնիք կրնայ իւր ազգեցիկներու ունենալ : Եւ այսպիսի ժողով մի ինքզնիք կրնայ բողոքատիւ Եւրոպոյ , սահմանադրական տեքութեանց բարոյանքներու հետ : Մասն . իմքա .

րեկան տոկոսով , որ 3000 զուրուշի չափ կընէ , 24 թիւնի ազգային վարժարանաց պիտի լը հօգան ամեն տարի :

Իզմիր . 4 Հոկտեմբեր 1873

Յարգոյ խմբագիր Անգլոսոյ :

Բոյլ տուէք ինձ քանի մը անկեղծ և խոհալիս խորհրածութիւններ ընել մեր առժամանակեայ պատերազմական տեղապահ՝ Լոյսեան եպիսկոպոսին ընթացքին վրայոք , աղաչելով որ հրատարակէք զայնս . սիկ 'ի տեղեկութիւն ողջամիտ ժողովրդեան :

Ինչ կը բանի 'Լորին Գերապատուութիւնը այսքան ժամանակ՝ որ մեր մէջ կը գտնուի : Ըստ այժմեան տեսմանք որ կուտէ կը խմէ և փառաւորացէս կը հանդիսանայ , հարկաւ իզմիրցւոց ծախքով , մեր հոյակապ Լոյսեանը արանին մէջ , և կաշխատի զմեզ մարդ ընել , իբր թէ իզմիրցի հայք մինչև ցայսօր էջ եղած լինէին . . . Ըստ իւր բերնովը հրապարակաւ զրուցեց ինքն թերցատան սրահին մէջ՝ տու բազմաթիւ անկեղծ ուղղելով այս խօսքը՝ «Եթէ Լոյսեանին օրոք մարդ չըլլաք , ալ այնուհետև մարդ ըլլալէ չունիք » : Լոյսեան այս հրապարակական անարգանքը պիտի մարտնչէ քաղաքիս դերազգաց ազգայիններէն . չեմ կարծեր . քանզի յայնժամ ապացոյց մի տուած կը լլամբ մեր մարդ չըլլալուն . ուստի տարակոյս չունիմ թէ կանուխ կամ ուշ իւր այս ամբողջութեան փոխարէն՝ հանդերձ՝ տոկոսով պիտի ընդունի :

Իսկ 'Լորին Գերապատուութեան յանձնուած՝ խաղաղարար պաշտօնը ուր մնաց : Լորեանական ժողովը՝ որուն ամեն անդամներն արգէն հրատարակուած են , ինչո՞ւ չվերակազմուի փութով և նոր ընտրութեամբ : Ըստ պատճառը յայտնի է . քանզի եթէ ընդհանուր ժողովը վերակազմուի , անիշապէս ձեռք պիտի զարնէ բանիւրուն նոր Լոյսեանը մը ընտրութեան : Հետեւեալ Լոյսեան եպիսկոպոսին ճամբայ պիտի բացուի 'ի կ . Պրոյի վերադառնալու . ուր դժբաղդաբար ազգային խնդրութիւնները կը շարունակուին , որոցմէ կրնայ ինքն ալ մնա մի կըրէ : Ուստի 'Լորին Գերապատուութիւնը լաւագոյն կը համարի յօդուած և 'ի հանդիսութիւն անձին՝ իւրոյ՝ գործը երկնցնել զանազան պատճառներով , և այս միջոցի աշխատել , ինչպէս որ կաշխատի , իրեն կուսակցները դռնէ ժողովրդեան մէջ . որով ազգային երկոյսաւ կութիւնը հաստատուն պահելով , կը յուսայ մնալաւ կարելի եղածին չափ երկար ժամանակ :

Յարգոյ խմբագիր , կրնամ հաւատարմ ձեզ թէ՞ Լոյսեան սրբազանին միտքը օգտակար մինչև դաւ տարւոյն Լոյսի կամ Մայիս ամիսը , այսինքն հաւուրն , և յայնժամ երեսփոխանական ժողովոյն ընտրութեանը ձեռք զարնել հանդերձ՝ օգտակարութեամբ և անձնական տկակարութեամբ՝ դարձան՝ տանելով :

Չեմ մոռնար յաւելնելու թէ մեր առժամանակեայ պատերազմական փոխանորդը՝ իբր թէ ծանր խօսք լսած լինելով քանի մը զմեռնացի պատուաւոր անձինքներէ , փութացաւ անոնց դէմ գտնեցատանաց աղերսալի մատուցանել առ վստմա . ընդհանուր կառավարչին մեր : Ինքնաց անպատեհ , որ երբեք տեղի չէ ունեցած իզմիրի մէջ 'ի կողմանէ Լոյսեանի . բայց յիշեալ անձանց զրուցած խօսքը՝ միթէ ծանրագոյն են քան զհրապարակական անարգանքն , զոր Լոյսեան քաղաքիս ազգային ընթերցատան մէջ , հրապարակաւ ըրաւ բոլոր իմիրցի Հայոց :

Ըստ ասոնք են իմանկեղծ խորհրածութիւններս մեր առժամանակեայ տեղապահ Հօր ընթացքին վրայ , յօք , զորս ողջամիտ հասարակութեան ուղադրութեմը յանձնելով , մնամ բազում յարկանօք եայլն :

ՃԵՄԱՐՏԱԽՈՍ ՈՍԵ

Զուրիկի մեր քաղաքակից Հայ ուսումնասէր բարեկամ մը նամակին մէջէն հետեւեալ ազգային տեղեկութիւններն քաղելով՝ մեր ընթերցողաց կը հաղորդեմք .

«Շարաթ գիշեր պարոն Բին . հետ աստ գրտնուող 22ի չափ ազգային երիտասարդաց բնութեանը գացինք , որք ժողովը ունէին կանոնադրութիւն մի հաստատուելու նպատակաւ : Շիտակը գովելի գտանք իրենց այս ուսումնասիրական բարեջան ընթացքը . և շատ խոհեմ ու խելացի երիտասարդներ կերեան , մասնաւորապէս պարոն վարդանեանցն , որ նախագահ է

յիշեալ ընկերութեանը : Կենայ ըլլալ որ վերա-
աին երթանք իրենց ժողովոյն առաջիկայ շա-
բաթ երեկոյն : քանզի շատ հաւանցայ իրենց
ծանրաբարոյ խօսակցութեանցը :

ՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՈՆ

Ամսոյս չին երկուշաբթի օրը յոյժ փառաւոր
պաշտօն մի կատարեցաւ յեկեղեցին Լազարիթ
կրօնաւորաց վասն հանգստեան հոգւոյ մատամ
Քլարա Տիւսօ տիկնոյ, մօրն մեծաշուք Տիւսօ
եղբարց, որք իզմիրի քարափանց (քէ) երեւելի
չինութիւնը վրանին առած են և ամենայն յա-
ջողութեամբ յառաջ կրտսնին յօգուտ և ի
պայծառութիւն քաղաքիս :

Այս հոգւոյ շքեղ պաշտօնը կատարեցաւ ի
գերաւ տէր Ս. քաղաքաբէթի Ս. քաղաքապետին
Ձմիւռնիոյ, առաջակայութեամբ իւր իրաւա-
ւորութեան ներքեւ գտնուող կղերին մեծագոյն
մասին : Օտար տէրութեանց հիւպատոսներն,
ինչպէս նաեւ զանազան ազգայնութեանց վերա-
բերեալ երեւելի անձինք ներկայ գտնուեցան
յիշեալ հոգւոյ հանդիսին իրենց համակրական
ղեացմունքը և իրենց ակնածական համարումը
յայտնելու համար մեծաշուք տեարց Տիւսօ եղ-
բարց, որոց անունը երեւելի հանդիսացած է
գրեթէ ընդամենայն եւրոպայ, յեփայտոս և
յԱսիա, իրենց ճարտարապետական մեծամեծ և
աշխարհօգուտ ձեռնարկութիւններովն :

ՁԱՆԱՁԱՆ ԵՈՒՐԵՐ

Ձմիւռնիա 6, Հոկտեմբեր :

Այսօրնի նախորդ միւթէսարքի Մուսթաֆա
փաշային դատը ըստ ինքզոյ մեր վտեմաւ կու-
սակարն, ի Կ. Պօլիս փոխադրեցաւ : ուր Ար-
դարութեան ատենին առջև պիտի տեսնուի :
Ուստի Մուստաֆա փաշան անցեալ շաբթու
մեկնեցաւ ի Կ. Պօլիս երթալու :

—Անցեալ կիրակի գիշեր՝ գողերն Այի—Տի-
միթի բեկեղեցւոյն մօտ տուն մի մտնելով, ա-
մեն գտածնին վերցուցեր են : Ոստիկանութիւնը
յիշեալ չարագործները գտնելու կաշխատի :

—Անցեալ կիրակի երեկոյն օամանեան կայ-
սերական քօրվէթը Մուզաֆէր կոչուած, հասաւ
ի նաւահանգիստ մեր ընդ հրամանատարութե
Հայիլ պէյին : Յիշեալ քօրվէթը որուն վերայ
կրծածանի երկրորդ ծովապետ Հիւսէյն փաշա-
յին դրօշակը, շուտով պիտի մեկնի Միջերկրա-
կան և Կարմիր ծովուն օամանեան նաւահանգս-
տաց ոյցեւորութիւն ընելու և պիտի երթայ մինչև
ի Պարսա :

—Անգղիոյ Պանթան հարիւրն 6ի բարձրացոյց
գլխաւորեղ իւր :

—Յունաց Կ. Պօլսոյ Պատրիարք ամենաւ տէր
Անթիմոս ծերունի սրբազանը, երեք անգամ
պատրիարքութիւն ընելէ ետեւ, հրաժարեցաւ
իր պաշտօնէն ի պատճառս երկպառակութեան
ծագելոյ ի մէջ անդամոց Ս. Սինօքին և ժողո-
վրդեան մէկ մասին մէջ : Հետեւաբար առայժմ
Արթայի մետրապօլիտ տէր Սէրաֆիօ արքեպիս-
կոպոսը Տեղապահ կարգուեր է, մինչև որ ըստ
եկեղեցական օրինաց, նոր Պատրիարք մի ընտ-
րութեան ձեռք զարնուի :

—Կ. Պօլսոյ Ռուսաց գեւապան վեռ. Իկնաթիէֆ
գօրապետը, որ ի Լիվադիա գացած էր օգոս.
Չարին և կայսերական գերդատարանին հետ տես-
նուելու պատիւն ունենալու համար, ամսոյս չին
վերադարձաւ ի Կ. Պօլիս :

—Կըլսեմք թէ Պարսից օգոս. Շահը բարեհա-
ճեր է Շիրի—Խուրշիտի չորրորդ կարգի շքա-
նշանաւ պատուել զմեծարգոյ կարապետ էֆէն-
տի փանոսեան, որ Մանչ—Քէ Էֆէնդ պատուա-
կան օրագրոյն խմբագիր Տնօրէնն է :

—Բարձրադատի Մահմուտ փաշան, որ եր-
բեմն Մեծ—Ապարդոս, Ատանայի ընդհանուր
կառավարիչ անուանեցաւ :

—Բարձրաւ Միւհաթ փաշան Սէլանիկի ընդ-
հանուր կառավարիչ կարգեցաւ :

—Կ. Պօլիսէն ազգային գործոց վրայօք հա-
սած վերջին լուրերն խիստ աղէտալի են :

Ընդհանուր ժողովոյն անցեալ ամսոյ 28ին

ուրբաթ օրուան ընելու դռնիակ նիստը՝ ար-
գիւրեցաւ խռովայոյղ ժողովրդեան կողմանէ,
և այս առթիւ ցաւալի անկարգութիւններ ու
խռովութիւններ տեղի ունեցան : Երեսփոխա-
նական ժողովոյն առաջին և երկրորդ ատենա-
պետք վսե . Յարութիւն պէյ Տատեան և վսե .
Ստեփան փաշա Ապանեան, ազգային այս ան-
իշխանութիւնը չկրնալով զսպել առանց Բարձ-
րագոյն Դրան միջամտութեան, հրաժարեցան
իրենց պաշտօնէն : Իսկ խորմեան Ս. Պատրիարքն
չընդունելով անոնց հրաժեշտը, ինքը յօժարա-
կամ հրաժարեցաւ պատրիարքական Աթոռէն :

Դարձեալ անցեալ ամսոյ 30ին կիրակի տաւա-
ւօտ Պէշիկթաշի եկեղեցւոյն մէջ սուրբ պատա-
րագի ժամանակ խորմեան Պատրիարքին անուան
յիշատակութեան առթիւ սարսափելի կռիւ մը
ծագեր է և խռովարարները բարձրաձայն աղա-
ղակեր են, «Չենք ուզեր զՊատրիարքը, չպիտի
յիշուի անոր անունն», և այլն : Յիշեալ խռովա-
րարներն հարկաւ իրենց հակառակորդներն ու-
նենալով, սկսեր են Ս. Տաճարին մէջ և եկեղեց-
ւոյն բակը իրարու հետ կատաղութեամբ ծեծ-
կուել, և զիրար գանակոծել : Որով յեկեղեցին
գտնուող խաղաղասէր ժողովուրդը և մանա-
ւանդ կանայք և տղայք ահաւորովի մէջ մնացեր
են : Վերջապէս ոստիկանութեան զինուորներն
հասնելով, հազիւ հազ կարող եղեր են դադրե-
ցնել զխռովութիւնը :

Նոյն օրը Խաղաղի եկեղեցւոյն մէջ ևս այս
օրինակ խռովութիւն մի ծագեր է . բայց թեթեւ
թեթեւ լինելով, հարկ չէ եղեր ոստիկանութեան
զինուորները կանչել :

—Վենետիկի Միխիթարեան միաբանութեան
Արքահայրն հոն գտնուող միաբանները կաթողիկ
Հայոց ինդրոյն նկատմամբ Պապին հանած վեր-
ջին կոնդակն ընդունած և Հասունեանի կողմն
անցած ըլլալով, Կ. Պօլիս գտնուող Միխիթարեանց
մեծ մասը չընդունեցին իրենց Արքային և միա-
բանութեան մէկ մասին այս քրածը . և այսպէս
յիշեալ միաբանութիւնն իր մէջ շի բաժնուեցաւ :

Այս երկպառակութեան պատճառաւ, կիրա-
կի օրը Գատը գիւղի (Կ. Պօլիս) Միխիթարեանց
վարժարանին մէջ գտնուող վարդապետներէն
երկուքը՝ Հակահասունեանց ձեռք, դուրս
հանուեցան վարժարանէն՝ վերոյիշեալ կոնդա-
կին հպատակելուն համար . և միայն հակահա-
սունեան վարդապետք մնացին հոն, ընդ վերա-
տեսութեամբ Շիշմանեան Հ. Վարդան վարդա-
պետի, որ նոյնպէս մերժած է այն կոնդակը :

ՄԱՍԻՍ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ

Աֆիօնին գինը բարձրաձայն ի պատճառս
Հոլանտական ընկերութեան երեւան ելնելուն,
որ 250 կողովի չափ ծախու առաւ : Այս առ-
թիւ ուրիշ գնողք ևս ներկայանալով, անցեալ
և այս շաբթու ընդամենը 500 կողովի չափ վա-
ճառեցան, 210—220 և մինչև 236 դուրուշի առ-
չէքին : Պողտործի աֆիօնը 250ի վաճառեցաւ .
սակայն այս գիններով այժմ վաճառողք կան
բայց գնողք չկան : Քաղաքիս մէջ հազիւ թէ
1300 կողով պատրաստ աֆիօն կրգտնուի :

Բամպակին վերջին գինը 473 դուրուշ է առ-
կենդինարն՝ մեքենայով մաքրուածին համար :
Փալամուրը գիւրափաճաւ է 100էն մինչև
136ի կենդինարն ըստ սեւակին :

Ճէհրին կողովի . այսօրուան արժէքը 19 1/2
20 1/2 դուրուշ է օխան :

Քէօքայոյային Պախըրի տեսակը գիւրափաճաւ
է 200—195ի առ կենդինարն :

ԾԱՆՈԹՅՈՒՆ

Ի նպատակ Հայ քրեքցատան քաղուելիք վիճակա-
նաւորիւնը ներկայ Հոկտեմբերի 7ից վաղը կիրա-
կի՝ կէսօրէն 1 1/2 ժամ ետքը՝ տեղի պիտի ունենայ
Հայ քրեքցատան մէջ : Ուստի կը խնդրուի որ այն
անձիւքն, որ կը փախաբից Լքեքցատան զարգացման
նպատակով համար մասնակցիլ տոյն վիճակահանու-
րեան, իրենց փախաբը լրացնել դիմելով կամ Գոր-
ծաղիք ժողովոյն անդամաց մեկուն, կամ ի քեշտալ-

ճըլար պաշը՝ պարեմաց սափիւրջ Յօնանեան և Սար-
գիսի խանութք, և կամ քրեքցատան սպասար
Ստեփան Բաբեյեանի :

Ըստ նախկին ծանուցման, վիճակահանութեան
շահելի գումարը պիտի ըլլայ 1000 Ֆրանք ի հինգ
թիւս բաժանեալ. այսինքն Ս. 500 Ֆրանք, Բ. 200 Ֆր.
Գ. 150 Ֆրանք. Դ. 100 Ֆր. Ե. 50 Ֆր. պիտի զանի

Սկզբնաբ քիւրերն ոգիւն կը ըստուին : Նետեալաբար
շահած ժամանակն իրաւունք չեն ունենար շահած
գումարն ստանալու :

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԸՆԹԵՐՑԱՅԻՆ

Ֆոթոկրաֆիայի Էլ—Պէտէր ընկերութեան
գործատունն, որ յառաջագոյն Սթոնթիլին ֆը-
րէնքիսանէն կը գտնուէր, այժմ փոխադրեցաւ
ի Ֆրէնքիսանէն անգղիական քաղինոյին, որ ի
Ֆրանկաց թաղն :

2

ԳԻՒՆԴԻՆ ԲԱՐԵԿԱՄԸ



ԳԵՂԱՆՏԵ ՀՈՂՈՅԻ

ՀԱՂԱՅԻՆ ՀԻՒՆԴԻՆԻՍԻՆԻԲ

Մարդոյս ըզպին գրութեան (օրիֆ) շատ յոգնած ըլլալը
ստակի ախտ մըն է և զիջերուն ամենափոքրիկ շարժումը կամ զը-
գութիւնը վշտալէ է յոյժ : Վասն զի ուր գտնուէր է անոր գե-
ղը : — Միեւն գեղը այս է . քիչ իսկ գինի, գարեջուր, և ոգի-
ւնց ըմպելիք . և աւելի աղէկ իրաւոյ որ բոլորովին հեռանա ա-
նոնցմէ, և ամենեւին չմտն . նմանապէս խաչմէ մի խմիւր, և անոր
տեղ թեթեւ թէյով (չօ) գոհ եղիւ : Կարելի եղածին շափա-
քօր օր ծնէ ամեն գիշեր իմ գեղահաստերն երեք կամ չորս հատ
կըլլէ : շատ միտ կեր և համեմունք (օւշտ) հեռի կեցիւր : Եթէ
այս օգտակար կանոնները չըզուրկեմք ի գործ դնելու ըլլաւ,
միտքը շուտով պիտի հանգստանայ, մարմնիդ առողջ պիտի ըլլայ և
պիտի մոռնաս թէ ըզպ շարժումն ունեցար :

ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆԻՑ ԵՐԻՆԱՄԱՆՑ

Այս գործարարական վերաբերեալ ամեն հիւանդութեանց մը
թէ կըլլալը շափեւ աւելի զբաղի իրաւ կամ բաւական չէնը
լար, թէ քաղաք կամ աւազը երկրամասը կը հասնին կամ թէ
անոնց մէջցատեք կը զոյանան մեքքին համապատասխանած մասը : Այս
ամեն հիւանդութեանց ժամանակը պէտք է Հոլուրէի գեղահաստ-
րը ամենու լաւեալ հրահանգաց համաձայն և անոր սպաղանիօք լի-
փէլ երկիւմանց վարի կողմը անկողին մտնելու ժամանակը : Այս
դարմանը անմիջական օգնութիւն մի պիտի մատուցանէ, այնինչ ու-
րիշ գեղերը զուր տեղը գործածուած պիտի ըլլան :

ՍՏԱՄՈՒՍԻ ԱՐՈՒՆԻԸ

ՈՐ և է գեղ մի չկրնար ստանալիք գորութիւնը նորոգել և
աղէկացնել զայն շուտով : Ինչպէս այս գեղահաստերը . որոնք անարեւ
խաւնութեան կամ վատթար կերակուրէ պատճառաւ բոլոր թըթ-
ւութիւնը կըլանեն և կը հասնին ի լեարդն (ֆօրտ Գիշեր) : Ե-
րուն գործողութիւնը կը կարգադրեն . ինչեքու սաստիկ ձգտան
(ֆօրտ) գէպերու մէջ սքանչելի ներգործութիւն մի ունի և լիթի
ու ստամոքսի ամեն անկարգութիւնները միշտ կը բժշկէ :

ԲՈՐԲՈՒՄՈՒՄ ԹՈՒԲԱՆԱՅԻՆ (ԿՐԻՄԻՏ) ՀԱՁ ԵՒ

ՀԱՐՈՒՆԻՆ

Հիւանդութեան վերաբերեալ գործարանաց հիւանդութիւնը
ամեն ախտէն աւելի յաճախ կը պատահի և երբեմն աւելի վտա-
նաւոր է : Ասոնց գործողութեանց անկարգ ընթացքին առաջինը
շանեքը կրնան միշտ կարգադրուիլ Հոլուրէի հոլալաւոր գեղ-
հաստից միջոցաւ : Ասոնք շուտով կը դարմանեն արեւան օր և է օ-
տանալեկայ անշարժութիւնը, կըլթեթեցնեն խոցուած շնչաբան-
քը, կը բարեկարգեն շնչառութեան սաստիկ արագութիւնը և կը
բողոքութիւն կուտան շնչափողին ու թոքերուն գիւրութեամբ ու կա-
նանաւորապէս գործելու : Այս գեղահաստերը՝ իրենց մաքրողական
գործութեամբ կը սրբեն արեւը ամեն աղտոտութիւններէն, և այս
եղանակաւ կը զօրացնեն զգրութիւնը (ֆիլթր) ընդդէմ ծխախոտ
ախտի, շնչաբանութեան, և ուրիշ թոքային տկարութեանց :

ՏԿԱՐԱՅԵԱՆ ՄԱՐԿԱՅԻՆ ԲԱՂԱՅՈՒԹԻՒՆԻՑ

Տկարութեան, թուրութեան և ըզպացութեան դեպքերու
մէջ, որոնք ո՛ր և է բնական կամ գերբնական շափաղանդութեան յո-
ռաջ եկած են, այս գեղահաստից պլլալիւ և նորոգիչ ներգործու-
թիւնը մեծապէս օգտակար է . քանզի մարտողութիւնը կը վաճառա-
տատէ : մարմնոյն ամեն հիւթոց թափումը կը կանոնաւորէ, ըզպին
գրութիւնը կը զօրացնէ, հիւանդին միտքը կը յարգարէ և վեր-
պէս առողջութիւնը ձեռք կը բերէ :

Հոլուրէի գեղահաստերը ամեն օգտակար գեղերն են հի-
տեալ հիւանդութեանց համար :

Հիւանդութիւն, Թոքացաւութիւն, Թոքացաւութիւն,
Մախմային ախտ, Տեղաւորութիւն, Ցաւք որովայնի,
Խիթ (սահլէ), Զրգողութիւն, Միջադեպութիւն,
Հարբուղի, Անարողութիւն, Բարբոքութիւն,
Ծիւրական ախտ, Գալուկ, Ախտ ընդերաց,
Թանջ (ֆիստուլ), Բաբախին սրտի, Անկանոնութիւնը ք-
խալ պարանոցի, Քար կամ խիճ միզա-
լի երնոտութիւն, Նոցի, Մորթային հիւանդու-
լերդի հիւանդութիւնը Գլխացաւութիւն, Թիւք,
Փողացաւ, Ափողոտեան ախտ, Խցողութիւն :

Ի մարդիկ—տղի լրագրոյս,
Գ. Գ. Պալարեան :

Ի ՏԳԱՐԱՆԻ ԱՐՇԱՆՈՒՍՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ